Կոնֆլիկտների տրանսֆորմացիայի դպրոց

Փետրվարի 20, 2016 թ.

Կինը, անվտանգությունն ու խաղաղությունը

Գյուլնարա Շահինյան

0:10 - Փորձեմ հետաքրքիր անել ձեր օրը այսօր, բայց ուզում էի նախևառաջ սկզբից հարցնել ձեզ. երբ որ դուք կարդացիք «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» ի՞նչ ձեզ մոտ առաջացավ, դուք ի՞նչ սկսեցիք առաջին բանը մտածել:

0:24 – Գենդերային հավասարություն

- Հետո՞

-Ազատ հնարավորություններ

-Կանանց դերը միջազգային հարաբերություններում՝ հիմնաքարային տեսություններով, խաղաղությամբ:

-Ինչո՞ւ կանայք, ոչ թե տղամարդիկ:

-Որովհետև կանայք ավելի նուրբ էակներ են, պլյուս՝ ավելի դիվանագետ:

-Ինչո՞ւ հատուկ կանանց մասին է խոսվում՝ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» ու չի խոսվում նրա մասին, որ «Տղամարդիկ, անվտանգություն և խաղաղություն»:

-Երևի ավելի շատ տուժվածը…

-Որովհետև տղամարդիկ հակառակը՝ ավելի պաշտպանության կարիք են զգում:

-Ահա

- Կարծում եմ այստեղ, իմ կարծիքը այն է, որ կանայք երկար ժամանակ ունեցել են ավելի ճնշված դեր և ինչ-որ պահի նրանց դերը սկսել է, սկսվել է կարևորվել ու գուցե նաև դա դարձել է ինչ-որ խթան հետագայում խաղաղության կամ անվտանգության հիմնահարցերը կարգավորելու համար:

1:21 – Շատ լավ: Բայց մենք ունենք հետաքրքիր պատմություն՝ հայերս, և մենք ունեցել ենք դիվանագետներ ՝ կանայք, որոնք ճանաչված դիվանագետներ են եղել, հա՞: Ունեցել ենք կանայք, որոնք խաղաղության բանակցություններին մասնակցել են, ունեցել ենք կանայք, որոնք ստեղծել են բավականին հետաքրքիր դեկլարացիա մարդու իրավունքների, կանանց իրավունքների դեկլարացիա, որը շատ նման է մարդու իրավունքների դեկլարացիային, որը հարյուր տարի հետո եղավ, որը բավականին հետաքրքիր է: Ուզում եմ ասեմ՝ այդ ամեն ինչը եղել է: Ի՞նչն է պատճառը, որ մենք հիմա նորից սկսում ենք կանանց դերը հիշել, հա՞: Ես չեմ խոսելու միայն 1523 ռեզոլյուցիայի մասին, որովհետև տասնհինգ-քսաներեք ռեզոլյուցիան դա մի միջազգային փաստաթուղթ է: Մինչև այդ եղել են մոտավորապես մի տաս ռեզոլյուցիա,

որոնք խոսել են կանանց դերի մասին: Դրանից հետո էլ արդեն նոր ռեզոլյուցիա է եղել՝ 2242 և եղել են մի շարք ուսումնասիրություններ: Բայց տասնհինգ-քսաներեք ռեզոլյուցիան ինչո՞ւ եմ ուզում ես վերցնել որպես հիմնաքար: Որովհետև միջազգային օրենսդրությունը, քանի որ դուք բավականին այս երկու օրը խոսել եք միջազգային օրենսդրության մասին, այն բավականին փոխվել է: Փոխվելով ուրեմն համապատասխան լինել կյանքի հետ, համապատասխան լինելով այն կարիքների հետ, որը պահանջարկ ունի շուկայում: Ավելի դարձել է ոչ թե գլոբալ և ընդհանրական, ավելի դարձել է դեպի մարդ, ավելի դարձել է մարդու իրավունքների պաշտպանող: Եվ այդ ռեզոլյուցիան՝ այս ռեզոլյուցիան, դրանով շատ կարևոր է: Եթե դուք տեսնեք այս վերջին ժամանակի բոլոր փաստաթղթերը, դրանք ավելի սպեցիֆիկ են՝ ՄԱԿ-ի փաստաթղթերը, նույն կոնվենցիաները ավելի սպեցիֆիկ են, ավելի խոսում են մարդկանց իրավունքների հասանելիության մասին: Մի փաստաթուղթ է հիմա պատրաստվում ՄԱԿ-ում՝ խաղաղության մասին կոնվենցիա է և խաղաղությունը դիտվում է որպես իրավունք: Եվ դրա մասին մենք այսօր բավականին շատ կխոսենք:

Ի՞նչ բան է անվտանգություն: Հա՞, մենք խոսեցինք՝ ի՞նչ բան է: Ո՞նց ենք մենք դիտում անվտանգությունը: Ի՞նչ բան է անվտանգություն: Ո՞նց եք դուք դիտում անվտանգությունը: Ի՞նչ է ձեզ համար այդ:

3:26 – Եթե տվյալ անձը իր առողջական կամ հոգևոր կյանքի վտանգ չի սպառնում կամ ինչ-որ անապահով չի զգում իրան միջավայրում:

3:37 – Մենք խոսում ենք մի քանի, հա՞, անվտանգության մասին այս վերջին տարիներին: Մենք խոսում ենք կոշտ անվտանգության մասին, որը զենքով պաշտպանել է մարդուն և խոսում ենք փափուկ անվտանգության մասին, որը կոչվում է մարդկային անվտանգություն: Գիտե՞ք այդ կոնցեպցիայի մասին՝ ի՞նչ բան է մարդկային անվտանգություն:

3:58 - Ըստ իս անվտանգությունը այն իրավիճակն է, երբ չկա լուրջ խոչընդոտներ խաղաղ զարգացման համար: Այսինքն՝ նպաստավոր պայմաններ կան ստեղծված խաղաղ զարգացման համար:

-Մարդու իրավունքների լիակատար իրավապաշտպանություն:

4:14 – Շատ լավ:

-Մարդկային անվտանգությունը իմ կարծիքով մի այնպիսի իրավիճակ է, երբ որ մարդը չի ենթարկվում մշակութային կամ կառուցվածքային բռնության:

4:27 – Այո: Շատ հետաքրքիր կոնցեպցիա է: Այդ կոնցեպցիան ի հայտ եկավ, երևի ճանաչում եք Նոբելյան մրցանակի դափնեկիր Ամարտյա Սեն, իրա առաջարկությունն էր, որպեսզի իբր մենք խոսում ենք գլոբալ անվտանգության մասին, երկրի անվտանգության մասին, մենք անընդհատ խոսում ենք զենքի ձևով, զենքի պաշտպանությամբ: Մենք ոնց որ թե կորցնում ենք մարդուն: Չէ՞ որ պաշտպանված մարդը, երբ որ այդ մարդուն հասանելի է բոլոր իրա իրավունքները, երբ որ մարդը չի վախենում, որ այսօր իրա վրա կկրակեն, այսօր ինքը կկորցնի աշխատանքը, այսօր իրա ընտանիքը սոված կմնա, որովհետև իրան հասանելի չի լինի այս-այս-այս իրավունքները, եթե ինքը պաշտպանված չլինի իրա երկրի օրենքով, եթե նա գնա դատարան ու դատարանում նա չստանա պաշտպանություն ու պաշտպանությունը

լինի անհավասար՝ մեկը կարող է ստանալ պաշտպանություն, մյուսը՝ ոչ, նույն օրենքի տակ, եթե կրթությունը անհասանելի լինի, այդ բոլորը բերում է նրան, որ մարդը իրա երկրում իրան վտանգված է զգում: Ու շատ դեպքում մարդիկ միգրացիոն պրոցեսները, լքելը երկիրը գալիս է նրանից, որ մարդ իրա երկրում իրեն անպաշտպան է զգում: Մարդը զգում է, որ ցանկացած պահի ինքը կարող է խոցելի լինել՝ սեքսուալ բռնության նկատմամբ, ռեպրեսիաների, հիվանդությունների, որովհետև երկիրը չի կատարում իրա պարտավորությունները՝ սահմանադրական պարտավորությունները, միջազգային օրենքի տակ պարտավորությունները: Այս ամեն ինչը բերում է այդ մարդկային անվտանգության կորուստի և դա բերում է ոնց որ երկրի ստրուկտուրայի խոչընդոտմանը: Մարդիկ փորձում են հասկանան՝ իրենց երկրում ինչքա՞ն են իրենք կարող ստեղծագործել: Չէ՞ որ ստեղծագործելը նաև էլի նորից իրավունք է, ազատ կարծիք հայտնելու իրավունք է, ստեղծել ինչ-որ կրեատիվ գործողությունը՝ էլի նորից: Մարդը անընդհատ չպետք է վախեցած լինի նրանով, որ ինքը իրա կյանքը կառուցի միայն նրա վրա, որ ինքը պետք է գոյատևի: Նա պետք է զարգանա, նա պետք է… Ստեղծված պետք է լինեն գործոններ, որը կստեղծի մի միջավայր, որտեղ այդ մարդը կկարողանա ազատ ստեղծագործել և ներդրում անի իր երկրի զարգացմանը: Դրանք շատ կարևոր գործոններ են ու երբ որ անալիզ է արվել, այն երկրները, որտեղ մարդը շատ պաշտպանված է: Պարզվել է, որ այդ երկրներում մարդը զգում է իրեն իր երկրի քաղաքացի, մարդը զգում է, որ իր իրավունքները կատարված են և ինքը կարող է ստեղծագործել: Ոնց որ թե կապը դրսի անվտանգության հետ, կոշտ անվտանգության հետ մոտ է, բայց ավելի շուտ մարդիկ իրենց զգում են քաղաքացի և կարող են ոնց որ ասած ռեակցիա տան այն վտանգներին, որը սպառնում է դրսում: Մեզ մոտ, մենք շատ ենք միշտ… Քանի որ իմ տարիքը գուցե ավելի մեծ է ու ես միշտ այդ Սովետական Միությունում լսել եմ, երբ որ սպեկուլյացիա է լինում երկրի անվտանգության էլեմենտով: Միշտ ասում են՝ այս մի խոսի, ազատ մի խոսի, այս մի կարդա, գիտե՞ք, որովհետև մենք պատերազմի մեջ ենք, մենք ունենք դրսում թշնամի: Եթե մենք էս-էս-էս բացահայտենք, հա՞, մեր թշնամին այնտեղ է: Ես չէի ասի, որ հիմա մի քիչ փոխվել է իրավիճակը՝ իրավիճակը նույնպես էլի նույն բանում է: Եթե մենք խոսում ենք ինչ-որ բաների մասին՝ Հայաստանում, որ մարդու բաց արտահայտվելը խախտված է Հայաստանում, ընտրությունները խախտված են, մեզ միշտ ասում են. «Գիտե՞ք, մենք պատերազմի մեջ ենք: Մեզ պետք չի դուրս հանել այն, ինչ որ կատարվում է երկրում»: Եվ այդ սպեկուլյացիան բերում է նրան, որ այդ ընդհանուր, ոնց որ ասում է, կառուցվածքը երկրի վտանգի տակ է լինում: Շատ կարևոր է, որ այդ երկու էլեմենտը իրար հետ կապված լինեն:

Եվ ինչո՞վ է սա կապված, այդ մարդկանց անվտանգության ուրեմն, այդ ստրուկտուրան կանանց հետ, հա՞, որովհետև նա խոսում է հավասարության մասին: Նա ոչ թե խոսում է հավասար բաների՝ անպայման հիսուն-հիսուն կանայք, նա խոսում է հավասար հնարավորությունների, հավասար հասանելիությունների, հավասար պայմաններում, որ կանայք էլ, տղամարդիկ էլ ունենան հնարավորություններ օգտվել երկրի ռեսուրսներից: Շատ դեպքերում մարդիկ հասկանում են հավասարության տակ, որ հարյուր-հարյուր, հիսուն-հիսուն պետք է լինի այսպես: Ո՛չ: Հավասարությունը դինամիկ պրոցես է և դա խոսում է նրա մասին, որ պետք է, շատ կարևոր է ապահովել ռեսուրսների հասանելիությունը բոլորին հավասար, բոլոր նրանց համար, ովքեր այդ երկրում ապրում են: Դա ամենակարևորն է: Եվ

այդ պատճառով դա շատ կապված է գենդերային կոնցեպցիայի հետ, գենդերային հավասարության հետ և կանանց հավասարության:

9:19 – Մի հարց կարելի է:

- Խնդրեմ:

9:21 – Freedom from fear, freedom from want: Ի՞նչ նկատի ունեք:

- Want՝ ուտելը, աշխատանք ունենալը, ստեղծագործելը, կրթությունը: Այդ want-ը ամբողջ այդ կոմպլեքսն է: Հիվանդությունները չլինելը, Սիրիայի պատերազմն է, բռնաբարություններն է, բռնությունն է քո նկատմամբ, մարդու նկատմամբ: Այդ երկու էլեմենտն է կարևոր մեջը:

9:46 – Freedom from want:

9:48 – Հա՛, freedom from want: Want to civic education, ես ուզում եմ sustainability in my life, sustainability-ին այդ ողջ պրոցեսն է, որ ես ուզում եմ որ իմ կյանքս ոնց որ ասում է ծրագրավորված լինի: Գիտեք, շատ ՄԱԿ-ի փաստաթղթերի մեջ, որ դուք նայեք, այս կոնցեպցիան կա: Freedom from fear, freedom from want, what I want to do, this means what I want to do in order to be empowered, in order to be sustainable, in order to have jobs, in order to be productive by law: Դա է հիմնականում:

10:28 – Ինձ թվում է՝ իմաստը այն է, որ քո հիմնարար պահանջմունքները՝ մարդկային հիմնարար պահանջմունքները այնքան են բավարարված, որ դու ազատ ես կարիքներից:

10:35 - Այո՛, այո՛, այո՛: Դու վախեր չունես: Հասկանում եք: Դու վախ չունես, որ դու ապրում ես այն երկրում, ոնց որ մենք գիտենք Սուդանում, Սոմալիում, որ քեզ կարող են պարզապես բռնաբարել: Ես դրա մասին հետո կխոսեմ, որ կանայք դառնում են ոնց որ արդեն գործիք պատերազմների ժամանակ: Դու վախ չունես, որ դու այսօր աշխատանքդ կորցրեցիր, քեզ պետությունը չի վերահատուցի ինչ որ մի ժամանակ, որպեսզի դու գտնես մյուս աշխատանքը: Դու վախ չունես, որ քո երեխաները կրթության նկատմամբ հասանելիություն ունեն, հասանելիությունը լինի իրենց կրթության: Իրենք ապագա ունեն երկրում: Այդ վախերդ քո վերանում է: Հասկանո՞ւմ եք: Այդ բոլորը բավականին շատ հետաքրքիր կոմպլեքս է, որ ես ուզում եմ (ոնց որ ասում է) կերակրված լինեմ, ես ուզում եմ հասանելիություն ունենամ անընդհատ ուտելիքի նկատմամբ, հա՞: Դա էլ է freedom from want, I want to have food, I want to have sustainability, I want to have education: Այդ բոլոր want-երը իրավունքների want-երն է, այստեղ է freedom from want: Շեշտը դնում եմ այս կոնցեպցիայի վրա, որովհետև պաշտպանված մարդը պաշտպանված է պատերազմի առաջ էլ՝ ինքը կգնա, կկռվի: Իսկ եթե մարդը չունի ուտելիք, ինքը գիտի, որ իրա երկրում ինքը ոչ մի ձևով պաշտպանված չի, առօրյայի վրա է ապրում՝ իր համար ամեն ինչը վախ է արդեն: Ինքը չի գնա իր երկրի համար կռվի, նույնիսկ եթե դա իր երկիրն է, որովհետև ինքը անընդհատ այն որ ասում են գոյատևման առաջ է կանգնած ու դա շատ վտանգավոր է: Նաև դնելով այս էլեմենտի մեջ… Ու այստեղ կա մի հատ շատ լավ էլեմենտ: Ոչ միայն տալ՝ այդ անհասանելիությունը ապահովել, այլ նաև ստեղծել միջավայր զարգացնելու համար, պրոցես ստեղծել: Այստեղ նորից ես, այս կոնցեպցիան դրված է շատ մի հետաքրքիր ուսումնասիրության վրա, եթե դուք գիտեք, այդ

հայը՝ Տարոն Աչեմոգլու, և ինքը գիրք է գրել «Why nations fail»: Այնտեղ ինքը բերում է օրինակները՝ ինչի՞ մի երկրները հաջողություն ունեն, մյուսները կորցնում են: Այս կոնցեպցիան դրված է հիմքի մեջ, հիմքում այդ: Ինչի՞ եմ ես շեշտը դնում կոնցեպցիաներին: Որովհետև շատ, նու ՄԱԿ-ում, տարբեր տեղեր, միջազգային հաստատություններում ես տեսել եմ, որ մարդիկ օգտագործում են բառերը որպես կլիշեներ՝ չխորանալով կոնցեպցիայի մասին, չհասկանալով՝ ի՞նչ է այդ կոնցեպցիան բերում: Եվ մենք դրա ունեցանք նույնիսկ Հայաստանում, դրա արտահայտությունը, երբ որ գենդերային կոնցեպցիան ի հայտ եկավ և դրա դեմ մեծ պայքար եղավ, առանց հասկանալու սկզբից մենք ընդունեցինք այդ կոնցեպցիան, առանց հասկանալու փոխեցինք հավասարությունը կանանց և տղամարդկանց մեջ: Դրա համար ես ուզում եմ ասեմ. եթե դուք գիտեք այդ կոնցեպցիան՝ ես դրա մասին չեմ խոսի, եթե ոչ՝ կարող եմ խոսել: Ուրեմն՝ ինչո՞վ է կարևոր կանանց մարդկային անվտանգության այդ կոնցեպցիայի մեջ ներգրավելը: Որովհետև, երբ որ մենք խոսում ենք դրա մասին, որ կանայք պետք է… կանայք ունեն ավելի տարբեր փորձ և ներգրավելը կանանց այդ պրոցեսների մեջ բերում է ոնց որ ասած ավելի մեծ նկար, ավելի ընդհանուր նկար և մենք բոլորս սկսում ենք այդ փորձերը հաշվի առնել: Այսքան տարիներ խոսվում է նրա մասին, որ բանակցություններում, բոլոր պայմաններում պատերազմական միշտ տղամարդ են լուծումները կատարվում՝ տղամարդիկ որոշումներ են կայացնում, կանայք կատարողն են այդ որոշումների: Ինչո՞ւմն է պրոբլեմը՝ կանայք թո՞ւյլ են, գիտելի՞ք չունեն: Ո՛չ: Ի՞նչն է պատճառը:

14:16 – Կարծում եմ դա ավանդաբար է եկել կանանց ստերադաս դերից՝ կիինը բանը պետք է լինի՝ ներսի պատը պետք է լինի, տղամարդը դրսի պատը: Հենց այդ ավանդական մտածելակերպից է եկել:
14:27 – Բայց ես ձեզ բերեցի հայրական, հայկական փորձը:
- Դե՛
- Ի՞նչն է պատճառը: Մենք նույնիսկ նախարար ենք ունեցել Ղարաբաղում՝ կին:
- Հա, բայց քիչ են տենց տարբերակները, իմ կարծիքով քիչ են՝ Դիանա Աբգարովին: Քիչ են իրենք, հատուկենտ, այստեղ, այստեղ, կամ այս ժամանակաշրջանում, հետո՝ մի քանի տարի հետո:
14:49 – Գիտելիքներ չունենք:
- Չէ, գիտելիքների խնդիրը չի, չեմ կարծում:

14:58 – Որպես կանոն բոլոր հիերարխիաների գագաթում կանգնած են տղամարդիկ, բայց ավելի ստորին մասում հերարխիայի միշտ կանայք են: Ինչո՞ւ: Ինձ թվում է, որ կանայք ավելի ավելի որակյալ աշխատողներ են: Ես եմ այդպես կարծում, որովհետև որոշումների ընդունումից շատ ավելի կարևոր է որոշումների ճիշտ կատարումը ու որպես կանոն այդ ճիշտ կատարումը ապահովում են կանայք, հա՞: Ներկայումս հետազոտություն կա, որ բանկերում ավելի ստորին հատվածի մենեջերները կանայք են ու իրենք են ապահովում բանկերի հիմնական, մշտական գործունեությունը: Կարծում եմ՝ տրամաբանությունը դրանում է:

15:29 – Նույն դպրոցներում տնօրենները տղամարդիկ են, ուսուցչուհիները՝ կանայք: Վերջում…

- Ինձ թվում է այդ կանայք ավելի լավն են, քան թե տղամարդիկ: Տղամարդիկ ավելի լավն են, քան կանայք: Այդ առասպելը ես ինձ համար վաղուց արդեն կոտրված եմ համարում ու իմ կարծիքով պրոբլեմը նրանում է, որ կենցաղային պարտականությունները կիսելու ժամանակ կնոջ վրա ամենօրյա տան անելիքը, երեխային պահելը և այլն ավելի շատ է լինում: Հետևաբար ավելի մեծ պատասխանատվություն, ավելի շատ ժամանակ ու ավելի շատ commitment նվիրվածություն պահանջող տեղերում հնարավորություն չի լինում ընտրվելու ու որ շատ երկրներ կան, որոնք փորձում են ընդգրկել երեխա ունեցող կանանց այդ հարցում: Այսինքն այդ ինչ-որ դերերի տարբերություն գրեթե չկա ու բնականաբար ավելի առողջ է այն հասարակությունը, որտեղ ներկայացչական, մասնակցայինի աշխատանքը ավելի, ավելի շատ է ոգևորում: Դու կաս հասարակության մեջ, ինքը ավելի ուժեղ է ու ավելի լավ է կառավարվում, եթե դու մասնակցում ես իրա կառավարմանը:
- Շատ լավ:

16:35 – Ես մի բան ասեմ: Գիտեմ՝ շատերը հաստատ համաձայն չեն լինի, բայց ես ֆիզիոլոգիական հատկանիշներին մեծ դեր եմ հատկացնում: Ընդհանրապես ասում են, կենսաբանները արդեն հավաստիացնում են, որ մարդու ուղեղը երկու մասի՝ ձախ կիսագունդ, աջ կիսագունդ, կանանց մոտ զարգացած է մեկը, որը պատասխանատու է ավելի շատ էմոցիոնալ դաշտի համար, տղամարդկանց մոտ՝ ավելի բանական ու ավելի այդ լոգիկան է աշխատում: Ճիշտ է, ես ասում եմ, լինում են բացառություններ: Ես բացառությունների մասին չխոսեմ: Ընդհանրապես այդպես են ասում և դրա համար ես ոչ թե թերագնահատում եմ, ինձ համար բոլոր պաշտոններն էլ կանայք կարող են զբաղեցնել, բայց միևնույնն է, հենց այնպես չի էլի, նկատի ունեմ, հենց ի սկզբանե եկել, որ կան պաշտոններ, որտեղ այդքան շատ կանանց չենք տեսնում: Եվ հենց մեկը հենց քաղաքականությունն է՝ շատ չենք տեսնում, իրականում իրանք ավելի ուրիշ ձև են նայում այդ ամեն ինչին: Դա հենց այդ էմոցիոնալ դաշտն է, որ կանանց մոտ ավելի ուժեղ է, քան տղամարդկանց: Տղամարդիկ այդ պրիզմայով չեն նայում աշխարհին իրականում: Ես չեմ ասում, որ ես թերագնահատում եմ, ճիշտ հասկացեք, բայց ես…

17:34 – Եկեք տղամարդուն տանք, հետո աղջիկներին խոսքը:

-Շնորհակալություն: Ես կարծում եմ՝ դարեր շարունակ խնդիրը եղել է հենց կանանց… կանանց զբաղվածության խնդրի հետևանքով է ձևավորվել, որովհետև ըստ էության տղամարդն ու կինը ֆիզիոլոգիական առումով կինը մի ֆունկցիա ավել է կատարում ու դա իրենից շատ ժամանակ ու շատ երկարաժամկետ ջանքեր է պահանջում: Դա վերարտադրողական ֆունկցիայի իրականացնելն է ու բացի վերարտադրողությանը՝ այդ սերունդին դաստիարակելու ու մեծացնելու խնդիրը: Դրանով պայմանավորված՝ կնոջ կոպիտ ասած զբաղվածությունը սահմանափակվում է ինչ որ չափով ու այդ ժամանակ արդեն տղամարդը ավելի լայն հնարավորություններ է ունենում իրեն դրսևորելու թե քաղաքական, թե տնտեսական, թե այս:

18:19 – Հասարակության մեջ կանանց նկատմամբ կարծրատիպերը դեր չեն խաղո՞ւմ:
- Դե բնականաբար խաղում են, բայց ըստ էության՝ առաջնային:
- Սոցիալական ստրուկտուրաները, երկրում չզարգացվածությունը, այն սոցիալական սֆերաները, որտեղ որ պետք է օգնեն կնոջը: Որովհետև տեսեք Սովետի փլուզումից հետո

շատ հետաքրքիր վիճակ եղավ: Եթե Սովետի ժամանակ ինչ-որ քվոտաներ կար՝ առաջ էինք գնում, երբ որ այդ սոցիալական ոնց որ ասում են այդ network-ը փլվեց՝ մանկապարտեզներն է, դպրոցներն է, իսկ բեռը չվերցրեց կանանցից: Կանանց թիվը ընկավ բավականին շատ՝ ներկայացուցչական: Բայց այդտեղ կար մի այլ երևույթ նաև: Իհարկե կան ազատություններ: Եթե առաջ մենք բոլորս ոնց որ ասած բանի մեջ ենք՝ թունելի մեջ ենք, պետք է դպրոցը ավարտենք, հետո ինստիտուտը պիտի ավարտենք, ընտրենք այս-այս-այս մասնագիտությունները, որ արդեն նախօրոք մեզ համար որոշված էր, որովհետև որոշված էր՝ կինը պետք է դառնա բժիշկ, ուսուցչուհի, բլա-բլա-բլա, էս-էս-էս, տղամարդը պետք է դառնա ինժեներ, էս-էս-էս-էս՝ շուկան սկսեց թելադրել ուրիշ պայմաններ: Ու շատ դեպքերում կանայք նույնիսկ չեն էլ ուզում գնալ քաղաքականություն, որովհետև կան ավելի հետաքրքիր բնագավառներ: Շուկայում մենք բոլորս ընտրություններ ենք կատարում շուկայի թելադրանքով: Մենք սկսեցինք տեսնել, որ կա մարքեթինգ, կա բիզնես, կա էս, կա էն: Մենք կարող ենք ստեղծել մեր փոքր բիզնեսը ու պրակտիկ տեսնենք ո՞նց է լինում: Չէ՞ որ պրակտիկ այստեղ մի պահ կա, որ կանայք բերում են իրենց հետ ոնց որ անընդհատ տանը լինելով՝ երեխաների փորձը և ոնց որ ասած բաների փորձը՝ դարերի փորձը՝ երեխաների, պապիկների, տատիկների: Իրենք բերում են այն բոլորի ձայները, դժվարությունները, որոնք կան: Եվ իրենք ուզում են շատ շուտ ու պրակտիկ տեսնել արդյունքները: Տեսեք, Հայաստանում էլ նույնպես, նույնպես դրսում շատ հետաքրքիր է: Ավելի շատ դուք կանայք կտեսնեք հասարակական սեկտորում, քան կանայք պետական բաներում՝ պաշտոններում, որովհետև կանայք ուզում են առաջ արդյունք տեսնեն: Իրենք այնտեղ տեսնում էին, որ իրենք կարող են կատարել: Իրենք արդյունքն են տեսնում ու կատարում և կարող են ոնց որ ասած ընդունակությունները, բաները դնեն, ներդնեն: Բավականին հետաքրքիր, բավականին flexible, բավականին ազատ սֆերա է:

20:33 – Ես ուզում էի մի հատ նկատառում անեի, էլի: Որ մենք խոսում ենք կանայք տարբեր սեկտորներում, և այլն, և այլն, եկեք ընդունենք, որ մենք նույնիսկ պատմության գրքերից, դպրոցական տարիքից մենք ուղղակի չեմ ասում՝ պաշտել ենք, բայց մենք հիացել ենք, Սոսե Մայրիկի մասին ենք անցել, ինչքանով որ ճիշտ եմ հիշում ազգանունը Զարուհի Եսայան էր՝ ցեղասպանության տարելիցի առաջին քրիստոնյան: Ի նկատի ունեմ Այծեմնիկը, որ նետ ու աղեղով և այլն, և այլն, այդ ամեն ինչը մենք միշտ հիացել ենք կանանց այդ քաջությամբ, արիությամբ ու մենք միշտ էլ դա գնահատել ենք: Ու նկատի ունեմ հիմա ճիշտ է ժամանակները փոխվել են:

21:18 – Որպես մոդել շարունակել ու չենք վերցրել: Շատ քիչ:

- Քիչ, բայց համենայն դեպս միշտ էլ հիացել ենք:

21:29 – Այո՛, հիանում ենք մինչև հիմա, բոլորս հիանում ենք:

- Քանի՞ հատ կնոջ արձան գիտեք:
- Բոլորը ձիավոր տղամարդիկ են:

21:37 – Այստեղ՝ Մայր Հայաստանը: Մայր Հայաստանը: Բայց ինքը ան-ձի է, բայց զենքով է:

- Գյումրիում՝ անկախության հրապարակը՝ կարևոր հրապարակ, «Հայուհու» արձանն են դրել:

- Մի բան ասեմ
- Հայուհու արձանը
- Ես համաձայն եմ, որ Հայաստանի շատ քաղաքներում ակցիա կա, ողջ աշխարհում հայությունը մայր-եսիմ ինչ է, մայր-գիտություն կոնցեպցիան ընդունված է, բայց եկեք նկատենք, որ այստեղ կինը չի կարևորվում, այստեղ մայրն է կարևորվում, այսինքն խոսքը հասարակության համար կարևոր դեր ունեցող բջիջի՝ ընտանիքի մեջ կարևոր դեր ունեցող անձի մասին է: Այսինքն մենք կարևորում ենք «մայր» դերը որպես հասարակության համար ինչ-որ լուրջ նշանակություն ունեցող երևույթ, բայց ոչ կին:

22:36 – Շատ ճիշտ է, ճիշտ է, ճիշտ է: Մի օրինակ էլ ես ձեզ բերեմ էլի նորից անկախությունից հետո, երբ որ նորից շուկան փոխվեց, տղամարդիկ ոնց որ սկսեցին կորցնել իրանց դերերը, որոնք միշտ իրենց ասում էր, որ հաց բերողը իրենք են, հաց վաստակողը իրենք են: Իրենք սկսեցին… որովհետև շուկան փակվեց, գործարանները փակվեցին: Ինժեներական այն գործերը, որը միշտ իրենց վրա դրված էր՝ փակվեցին: Կանայք ավելի ոնց որ ճկուն եղան: Իրանք սկսեցին շուկայի մեջ գտնել ինչ-որ աշխատանքներ, որով կարողացան իրենց ընտանիքը պահել՝ հասկանալով, որ այդ պրոցեսը ժամանակավոր է: Այ դա հենց այդ գենդերային ճկունության մասին է խոսքը: Ոչ թե խոսվում է հավասարության մասին, այլ գենդերային կոնցեպցիան կոմպլիմենտար է: Մենք երկուսս էլ տարբեր ենք՝ կանայք և տղամարդիկ, մենք տարբեր ենք անում գործերը, մենք տարբեր գիտելիքներ ենք բերում, տարբեր փորձ ունենք, բայց իրար հետ միանալով ու ճիշտ ոնց որ կառավարելով այդ պրոցեսը, մենք բերում ենք շատ լավ ներդրում երկրին, նույնը խաղաղության մեջ: Շատ կարևոր է, որ խաղաղության մեջ բոլորի ձայները լսվի, նրանց, ով որ ունեն մեծ փորձ երեխաների հետ շփվելու, տատիկների հետ շփվելու, ծերերի հետ շփվելու: Այդ փորձը, որը երկրում, որը գուցե սեղանին նստած տղամարդիկ շատ քիչ լսեն: Ի՞նչն է պրոբլեմը, երբ որ կանայք չեն լինում: Սա կլասիկ մոտեցումն է: Այստեղ ես իրան ավելացնեմ մի հատ շատ հետաքրքիր մի ուսումնասիրություն, որ այս վերջերս կատարվեց: Քառասուն կոնֆլիկտ… կոնֆլիկտներ, որոնք ստացել էին ժամանակավոր լուծում: Այդ կոնֆլիկտները նորից, ոնց որ ասած սկսվեց նորից պատերազմը, նորից կրակի վերածվեց: Ու երբ որ անալիզ էր կատարվել՝ ինչո՞ւ է այդպես, International Crisis Group-ը, դա խոսում է նրա մասին, որ մասնակցությունը շատ փոքր էր կանանց, մասնակցությունը մարդկանց, լսելը մարդկանց, որոնք ապրելու են հետո՝ այդ կոնֆլիկտից հետո, ապրելու են այդ խաղաղության մեջ, որը ստեղծվել է մարդկանց կողմից՝ չկա, իրենց ձայները չկա, իրենց կարիքները հաշվի չեն առնվել: Ու շատ դեպքերում ամենը մեզ մոտ է կատարվում: Կոնցեպցիա խաղաղության. դուք տեսե՞լ եք, որ շատ մեզ մոտ վաճառվի այդ կոնցեպցիան: Մեզանից ո՞վ գիտի՝ ի՞նչ է խաղաղությունը, հա՞: Մենք մտածե՞լ ենք այդ մասին: Մենք մտածում ենք՝ պատերազմը ավարտվի, հա՞, էլ չեն կրակի հա՞: Դա է խաղաղությունը, երբ որ չեն կրակելու: Խաղաղությունը, ոչ, կրակելը չի, խաղախությունը զարգացում է, խաղաղությունը իրավունքների հասանելիությունն է, խաղաղություն է ապահով ապրելը, վախից և ուրեմն ուզելուց ապահով լինելը: Խաղաղությունը այդ ամբողջ կոմպլեքսն է: Խաղաղությունը զուտ բան չի: Բայց մեզ երբեմն բերվում է շատ պրիմիտիվական ձևով: Խաղաղությունը կլինի այնպես, որ չեն կրակի: Հայաստանում հա՛ հիմա սահմաններում կրակում են, բայց էլի նորից, չէ՞, ինչ-որ ձևի ոնց որ ժամանակավոր խաղաղություն էր մինչև հիմա, բայց դա խաղաղությո՞ւն էր, դա տալի՞ս էր մեզ ապագա: Չէ որ մարդիկ երկրից գնում էին, որովհետև չէին տեսնում ապագա: Այդ

խաղաղությունը ոնց որ այսինչ ժամանակավոր լինում է Եվրոպայում և տարբեր երկրներում: Կարճատև խաղաղությունները, պայմանագրերը, որոնք ստորագրված են առանց մասնակցային պրոցեսի, առանց կանանց, դրանք որպես տրադիցիա փոխվում էին, ուրեմն նորից վերադառնում էին կոնֆլիկտի, ու դա հետաքրքիր ուսումնասիրություն է:

26:05 – Իսկ հակառակը

- Հը՞:
- Իսկ հակառակը, առանց տղամարդկանց:

26:09 - Առանց տղամարդկանց, տեսե՞լ եք այդպես լուծում, որ առանց տղամարդկանց: Մեր Մինսկ-ի խումբը նայեք, քանի տարի բաղկացած է միայն տղամարդկանցից: Մենք, որ ես եկա, մի քանի անգամ բերել ենք Մինսկի խմբին, որ լսի սահմանամերձ գյուղերում գտնվող կանանց, ու գիտե՞ք, բավականին մեծ զարմանք էր: Երբ որ դեսպանները լսում էին՝ կանայք ի՞նչ սպասելիքներ ունեն, իրենք զարմացած մեզ ասում էին. «Դուք իրենց պատրաստե՞լ եք, թե էս գյուղի կանայք են: Անհնար է, որ իրենք գյուղի կանայք լինեն, էս հարցերը տան»: Ինչը նշանակում էր՝ իրենք այդ բոլոր դետալները հաշվի չէին առել: Իրենք նույնիսկ փաթեթի մեջ հաշվի չեն առել՝ շատ լավ, վաղը մենք ստորագրեցինք մենք այդ պայմանագիրը, ի՞նչ է լինելու: Վերականգնողական աշխատանքներ են լինելու, աշխատանքները մարդիկ ունենալու են, ի՞նչ փաթեթ է լինելու, ի՞նչ զարգացման մեխանիզմներ են լինելու: Կանայք հարցնում են՝ խաղարարար զորքերը որտե՞ղ են կանգնելու, ումի՞ց են բաղկացած լինելու: Այդ հարցերի պատասխանն էլ չունեինք: Շատ-շատ հարցերի պատասխան չկար, հասկանո՞ւմ եք, որովհետև այդ դետալները բանի ժամանակ չի քննարկվել:

Էլի նորից ես բերեմ մի ուսումնասիրություն. այս վերջերս ՄԱԿ-ի առաջվա գլխավոր քարտուղարի տեղակալը՝ խաղաղարար զորքերի գծով: Ինքը շատ հետաքրքիր բան էր ասում: Խոսում էր, երբ որ կոնֆլիկտի ժամանակ՝ լուծելու կոնֆլիկտի ժամանակ, միայն գլոբալ խնդիրներն է լուծվում ու երբ որ դետալների մասին չի խոսվում, դետալները շուռ են գալու, դառնում են նորից կոնֆլիկտի պատճառ: Իսկ այդ դետալները հենց բերում են մարդիկ, որոնք ամեն օր ապրում են այդ կյանքով: Այդ դետալները պետք է անպայման հաշվի առնել: Նույնը, հիշում եք, մեզ մոտ, երբ որ խոսում էինք Մադրիդյան սկզբունքների մասին մենք, որ խոսում ենք՝ փախստականների վերադարձը, հաշվի չէր առնվել այդ մարդկանց: Ո՞վ էր հարցրել, Մինսկի խումբը հարցրե՞լ էր այդ մարդկանց՝ իրենք վերադառնան, թե չէ: Քսան տարի հետո նույն ադրբեջանցիները, ներքին տեղահանվածները կուզենա՞ն նոր կյանք կառուցել… կառուցելուց հետո՝ ուրիշ տեղ, ուրիշ երկրում, ուրիշ կրոնական միջավայրում նորից վերադառնան Ղարաբաղ, նորից նոր կյանք սկսեն: Ապահո՞վ է լինելու իրենց կյանքը այդ նոր տեղում, թե ոչ: Ինչքանո՞վ է ապահով լինելու, որովհետև եթե իրենք փախստական են, կոնվենցիան կա: Փախստականների կոնվենցիան միջազգային փաստաթուղթ է, որը ապահովում է իրենց պաշտպանությունը: Ներքին տեղահանվածները չունեն, միայն փափուկ փաստաթուղթ է Guiding Principles և վերջ: Դրանով դա պաշտպանություն չի տալու: Ո՞վ է հարցրել նույն ադրբեջանցիներին՝ կուզենան իրանք վերադառնան, թե չէ: Մինսկի խումբը որոշում է կայացրել այնտեղ նստած: Բայց մեկ անգամ չի նստել, ժողովրդի հետ քննարկել՝ ձեր կարծիքը ո՞րն է: Այ դա է, որ վտանգները կան: Երբ որ ներառական չի քննարկումը, լուծումը ներառական չի՝ նա միշտ շատ բան է՝ խոցելի է, նա միշտ կարող է շուռ գալ: Խնդրեմ:

29:09 – Ես մի բանից կուզեի խոսեինք: Ուրեմն, բնականաբար, եթե խոսում ենք մասնակցության լոկալիզացիայի, կանանց ներգրավվածության մասին, ավելի շատ ձեր ասածից ես հասկանում եմ, որ խոսում ենք կանանց ներգրավածությունը քաղաքացիական ոլորտի միջով, այսինքն՝ այս չներկայացված լինելը վերաբերվում է ոչ միայն պետական մարմիններին, այսինքն՝ պետական մարմիններում կանանց ներգրավածության ու ներկայացվածության, այլ նաև քաղաքացիական ոլորտում: Եթե այդ կողմից դիտարկենք՝ ընդհանրապես քաղաքացիական ոլորտը կոնֆլիկտների լուծման հարցում շատ քիչ ներկայացչություն ունի, ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ: Այսինքն՝ երկկողմանի է ու ընդհանրապես ամբողջ քաղաքացիական ոլորտն է թերի ներկայացված: Հիմա, մեկ էլ մի բան էլ ասեմ: Ուրեմն, եթե դիտարկենք նաև մյուս կողմից էլ պետական… պետական ինչ-որ մարմիններում խաղաղ կոնֆլիկտների լուծման համար կանայք արդյոք ներկայացված են, թե չէ, ու ինչքանով դա օգուտ կտա, իմ կարծիքով տարբերությունը այդքան շատ մեծ չի լինի, որովհետև եթե կա պետական պաշտոնյա, կա՝ պետական պաշտոնյան կին է, թե տղամարդ է, այդքան շատ տարբերություն չկա, որովհետև իրենք ներկայացնում են պետական շահերը ու բնականաբար լավ կլինի, որ և կանայք, և տղամարդիկ հավասարապես ներկայացված լինեն: Բայց եթե խոսում ենք կանանց հատուկ ներգրավվածության մասին՝ ես ուղակի ուզում եմ հասկանամ, եթե կա մարդ, որը որ ներկայացնում է պետական շահերը կամ պետական դիրքորոշումը, ինչո՞վ է տարբերությունը՝ կին, թե տղամարդ: Բնականաբար ես կողմ եմ, որ հավասարություն լինի՝ գենդերային հավասարություն, բայց ուղղակի այդ տարբերությունը չեմ հասկանում: Ինչո՞վ, ի՞նչ կնպաստի:

31:13 – Գիտեք, առաջինը ես, ինչպես այստեղ է ասվում, ես հենց իմ փորձի վրա ասեմ: Ես եղել եմ Երևանի քաղաքապետարանի գործկոմի անդամ մոտավորապես ութ տարի՝ ընտրված պաշտոն էր: Արտաքին հարաբերությունների վարչության պետ և նաև գործկոմի անդամ էի, որը բաղկացած էր տասներեք տղամարդուց, ես մենակ կին էի: Բավական հետաքրքիր իրավիճակ էր: Բայց այն խնդիրները, որը բերում էի ես ու հետաքրքրում էր ինձ, շատ տարբերվում էր նրանցից, որոնք բերում էին տղամարդիկ: Մենք բերում էինք տարբեր խնդիրներ: Ես բերում էի ավելի սոցիալական խնդիրներ, ես բերում էի ավելի խնդիրներ՝ վերաբերող երեխաներին, ես բերում էի խնդիրներ, որ ես դաշտում առնչվում էի իրանց հետ: Տղամարդիկ բերում են ավելի շինարարություն, շենքերի խնդիրներ: Հասկանում եք՝ մենք տարբեր ենք տեսնում, մենք տարբեր բաներ, տարբեր կյանքի փորձ ունենք, որովհետև շփվել ենք տարբեր, ոնց որ ասում է, խավերի հետ և այդ պատճառով մենք բերում ենք տարբեր գիտելիքներ: Եվ այդ պատճառով, իրոք, չեմ ասում հավասարությունը, բայց մասնակցությունը հավասարի մոտ շատ կարևոր է:

32:18 – Բնականաբար խոսքը խաղաղության և կոնֆլիկտին է վերաբերվում, եթե կա, եթե վերցնենք բանակցային գործընթաց, եթե կոնկրետ կա ներկայացված կետերը և պաշտոնյա, որը ներկայացնում է պետության դիրքորոշումը: Ի՞նչ կարևոր է, թե այդ պետական պաշտոնյայի սեռը ինչ սեռ է:

32:38 – Գիտեք, եթե պետական պաշտոնյան բաց է այնքան, որ ներառի բոլոր կարիքները բոլորի՝ շատ լավ, բայց ոչ միշտ ինքը ներառում է: Ինչպես ես ձեզ ասեցի, երբեմն դետալները շատ կարևոր են բանակցելու ժամանակ: Էլի նորից իմ պրակտիկայից, ես շատ եմ եղել բանակցող: Բանակցել եմ կոնվենցիան Եվրոխորհուրդի և ինքս եմ գրել խմբի հետ և

բանակցել եմ պետությունների ամեն դետալը և իրոք շատ տարբերվում է այն, ինչ որ մենք ենք տեսնում, հավատացեք իմ փորձերին, կանայք են տեսնում: Ես ֆեմինիստ չեմ, ես սկզբից ուզում եմ ասել, ես ավելի շուտ հումանիստ եմ, ես հավասարության ջատագով եմ, ես տեսնում եմ այդ ուրիշ ձևով, բայց մենք տարբեր ենք տեսնում: Այդպես գենետիկ է, որովհետև մենք մտածում ենք մեր երեխաների մասին, այն շրջանի մասին, որը տղամարդիկ էլ են մտածում, բայց մենք տարբեր ձևով ենք այդ ամեն ինչը տեսնում: Դա մենակ իմ փորձը չի: Եթե դուք կարդաք փսիխոլոգիայի ուսումնասիրություններ, դուք կտեսնեք, որ դա տարբերվում է իրոք, հասկանո՞ւմ եք: Մենք բերում ենք… Օրինակ՝ ես հիշում եմ, որ կոնվենցիայում ես բերեցի զոհի պաշտպանության բոլոր մեխանիզմները: Ինձ համար դա շատ կարևոր էր, որովհետև եթե զոհը, ոնց որ ես խոսում էի հիմա երկրում մարդկային անվտանգության մասին: Եթե մարդը պաշտպանված չի, դու ինչ ուզում ես արա, եթե մարդը իրան պաշտպանված չի զգում իրա երկրում: Նույնը՝ եթե թրաֆիկինգի ժամանակ զոհը պաշտպանված չի զգում՝ նա երբեք չի գա, չի խոսի, հասկանո՞ւմ եք: Իսկ նա պետք է ունենա շատ մեծ երաշխիքներ, որ խոսելուց հետո իրան էս չի լինի, խոչընդոտներ չի առաջանա, իրա կյանքը պրոբլեմների առաջ չի լինի, հասկանո՞ւմ եք: Մենք բերում ենք տարբեր մոտեցումներ և դա շատ կարևոր է: Շատ կարևոր է այն բոլոր խավերի, որոնք մասնակցում են, որոնց համար խաղաղությունը կյանք է, իրենց ձայները լսվի թեկուզ սեմինարների, թեկուզ բաների գծով, նույն ծերերի, նույն մարդկանց, որոնք, նույն երեխաների կարծիքը: Դրանք կարևոր են, դրանք դետալներ են, բայց այդ դետալները վերջում ասում է ձնագնդի պես վերադառնում են ու դառնում են պրոբլեմ: Տեսեք, այստեղ նույնիսկ սա անալիզ է արված, որ խոսում է նրա մասին, որ եթե կանայք չեն մասնակցում խաղաղության պրոցեսներում, իրոք ստրատեգիաները թույլ են, որովհետև իրոք չի բերվում, չի ներդրվում ստրատեգիաների: Այն կարևոր էլեմենտները՝ սահմանային էլենենտները, տնտեսական էլեմենտները, աշխատանքի, որոնք կարևոր են քննարկումների ժամանակ: Ինչպես ես ձեզ ասեցի կանայք, երբ որ հարցնում էին դեսպաններին՝ ի՞նչ աշխատանքներ են Հայաստանում բերելու, ինչքա՞ն փաթեթն է ներդրումային: Ես հիշում եմ՝ Ռուսաստանի դեսպանը ասեց. «Մենք դրա մասին չենք մտածել»: Ո՞նց չեք մտածել, եթե դուք խաղաղություն եք ստորագրում… Խաղաղության փաստաթուղթը թուղթ չի, նա ամբողջ պրոցես է: Եթե դուք այդ պրոցեսը չեք մտածել, էլ ի՞նչ եք դուք մտածել, հասկանո՞ւմ եք:

Այն մյուսը. նորից բանակցությունները էլի: Շատ երկրներում, երբ որ տեսնում ես, որ կանայք իրոք մասնակցել են՝ բերելով իրենց փորձը, բռնությունների փորձը, բաների փորձը՝ այն նվաճումների, որոնք իրանք պրոցեսի մեջ, պատերազմի պրոցեսի ժամանակ հասել են, դա ուժեղացնում է բանակցությունների պրոցեսը: Էկոնոմիկան, եթե ներդրում կանայք չունեն՝ թուլանում է էկոնոմիկան, չէ՞, որովհետև մի կողմն է ներդրումներ անում: Շատ… Նորից ես ձեզ բերեմ մի հետաքրքիր ուսումնասիրություն, որ, նախ կոնֆլիկտների մասին, որ այս վերջին տարիների շրջանում մենք բոլորս շատ լավ գիտենք, որ ոչ միայն կոնֆլիկտն է փոխել իրա ձևը երկրների մեջ, նա ոչ թե միայն երկու երկրների մեջ է, այլ արդեն երկրի մեջ է: Լիքը երկրների մեջ է կոնֆլիկտը տեղի ունենում, բնույթն է փոխվել կոնֆլիկտների: Խաղաղ բնակչությունն է դարձել արդեն կոնֆլիկտների թիրախային խումբ: Ու եթե առաջ պետական զորքերն էին մասնակցում կոնֆլիկտի մեջ, հիմա շատ-շատ դեպքերում վարձուներն են մասնակցում կոնֆլիկտի մեջ: Եվ վարձուները հիմա՝ տարբերություն չկա՝ ով է այնտեղ: Բռնությունների թիվը… Կա շատ լավ ուսումնասիրություն, իմ կոլեգան ՄԱԿ-ում արել էր,

ուսումնասիրություն՝ բռնությունների թիվը բավականին շատ մեծացել է, երբ որ զորքերը վարձու զորքեր են, հատկապես կանանց և ծեր կանանց նկատմամբ: Սարսափելի թիվը մեծացել է ու պատերազմները փոխել են իրենց բնույթը, դարձել են ավելի շատ դաժան, որովհետև վարձուների համար՝ վարձուին ոչ մի բան պետք չի, իրան պետք է իրա փողը ստանալ, արդյունքը տեսնել: Ինքը չի մտածում դա իրա երկիրն է, նա… սա չջարդեմ, սա չանեմ, նա չանեմ, նա պետք է բարգավաճի, նա գործ է կատարում: Բնույթը փոխվել է և մենք պետք է, չենք կարա հաշվի չառնենք այդ ամենը ինչը:

Ինչի՞ մասին է նորից այդ ռեզոլյուցիան խոսում: Այստեղ ես ձեզ ներկայացնում եմ, որ եթե մենք, եթե կանայք չեն մասնակցում կոնֆլիկտների մեջ, նորից այ բոլոր այդ հարցերը, եթե խոսում ենք քաղաքական մասնակցության մասին, եթե կանայք դեր չեն կատարում համայնքները ձևավորելուն, կոնֆլիկտը ուրեմն կանխարգելելուն, էլի նորից բավականին մեծ պրոբլեմներ է: Ամենակարևոր ուրեմն բաներից մեկը ես խոսեմ, հետո, ռեզոլյուցիայի պունկտերից մեկը կանխարգելումն է կոնֆլիկտներից, կոնֆլիկտների: Ու երբ որ դուք խոսում եք հասարակական սեկտորի մասին, շատ կարևոր էր նորից հասարակական սեկտորի դերը և կանանց կազմակերպությունների դերը կոնֆլիկտը կանխարգելելու դերում: Այս քսան տարվա ընթացքում կոնֆլիկտի բավականին շատ հանդիպումներ է եղել: Նույնիսկ չերևացող, նույնիսկ երբեմն դժվար պայմաններում Ադրբեջանի և Հայաստանի կանայք, Ղարաբաղի և Ադրբեջանի կանայք հանդիպումներ են կազմակերպել. Թիֆլիսում է եղել, սկզբից Բաքվում է եղել, սկզբից Երևանում է եղել: Բավականին շատ այդ հանդիպումները եղել է: Կան ՀԿ-ներ, որ իրոք հերոսական գործ են արել, շատ-շատ մեծ գործ են արել: Ես հիշում եմ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի նախագահը՝ Անահիտ Բայանդուրը, թեժ պատերազմի ժամանակ գնաց բեմին կանգնեց Բաքվում, երբ որ պատերազմ էր: Մարդիկ զենքերով նստած դահլիճում, ինքը ասեց. «Ես եկել եմ ձեզ ասեմ, որ բավական է: Մենք հարևաններ ենք»: Պատկերացրեք իրա խիզախությունը, իրա դերը: «Բավական ա կռվենք իրար հետ: Մենք չենք կարող անընդհատ իրար հետ կռվենք: Սենց, թե նենց մենք պետք է ապրենք իրար հետ»: Հասարակական սեկտորը շատ մեծ դեր է կատարել, կանայք շատ մեծ դեր են կատարել՝ հոդվածներ գրելով, ուղարկելով այդ խմբերին, բանակցողներին, բայց դա միշտ եղել է ոնց որ ասում է՝ ստվերային: Շատ դեպքերում պետություններում լսվում է դա, չեմ կարծում՝ մեզ մոտ դա շատ լսվել է: Հանդիպումներ երբեք չեն եղել, հաշվի չի առնվել: Նույնիսկ եթե կանայք չեն եղել բանակցությունների ոնց որ ասած զուտ պրոցեսում, նույնիսկ հաշվի չի առնվել իրանց կոնֆլիկտները: Ես կարծում էի, որ արտգործնախարարությունը շատ-շատ ավելի հանդիպումներ կկազմակերպեր նախքան գնալը բանակցությունների հասարակական սեկտորի հետ, որպեսզի լսեր այն խնդիրները, որոնք իրանք ուզում են, բայց ցավոք սրտի երբեմն չի լինում:

Այստեղ խոսվում է էլի նորից առանց ֆիզիկական անվտանգության մարդու իրավունքների մասին: Կանայք և աղջիկները միշտ խոցելի են: Ես բավականին երկար կարող եմ պատմել բռնությունների, կանանց մասին: Եվ ինքս մոտավորապես երևի ասեմ ձեզ տասը տարի պայքարում եմ մի պրոցեսի դեմ, որը չեմ կարող մինչև հիմա արդյունքի հասնել Հայիթիի հետ կապված: Երբ որ ութ տարի առաջ, ավելի շուտ՝ առաջին միսիան, տաս տարի առաջ ես գնացի Հայիթի, գիտեք Հայիթիի իրավիճակը ինչ է այնտեղ, ինձ տարան մի կանանց խումբ: Այնտեղ խաղաղարար զորքերը կանգնած են, խաղաղարար զորքերը բավականին մեծաթիվ են, այդ երկիրը ոչ մի ձևով չեն կարողանում ոտքի կանգնացնել, այդ երկիրը բավականին

շատ պրոբլեմների առաջ է կանգնած: Երկար է, որ ես պատմեմ Հայիթիի պատմությունը, բայց ինձ տվել էին մոտավորապես երեսուն թիկնապահ ու ինձ համար շատ զարմանալի էր, որ ես պետք է գնամ կանանց կենտրոն, հանդիպեմ կանանց և երեխաների հետ այդքան թիկնապահով: Ո՛վ պետք է ինձ հետ խոսի այդքան թիկնապահով: Պարզ է, որ ես կանգնեցրեցի այդ ամեն ինչը: Չնայած ինձ ասում էին, որ վտանգավոր է, կարող է կրակեն քո վրա, այս անեն, այն անեն, այն անեն, բայց ես համոզված էի, որ ոչ ոք ինձ հետ չի խոսի, եթե ես այդպես զորք ու զենքով գնամ: Երբ որ ես գնացի այդ կանանց հետ խոսեցի, ես ի՞նչ լսեցի: Կանանց բռնաբարել էին իրենց զինվորականները, սկզբից տեղի՝ չորս կին էին: Երբ որ գնացել են իրենք խաղաղարար զորքերի մոտ, խաղաղարար զորքերն էին իրանց բռնաբարել: Երբ որ իրանք դիմել էին ՄԱԿ-ին, ՄԱԿ-ը ասել էր. «Հա, մենք այդ հարցերը կլուծենք»: Եվ մինչև հիմա լուծում էին: Ես գնացի ներկայացուցչի մոտ ՄԱԿ-ի, ասելով, որ այսպիսի բան է կատարվել, ո՞նց ենք մենք կարողանում այդ հարցը լուծենք: Եվ այդ չորս կինը բան չէր, այդ պարզապես ոչ թե այդ միակն էին, պրոցեսը այնտեղ ամեն տեղ էր գնում: Այն մյուսն ասում է. «Մենք չենք կարող իրենց պատժենք, որովհետև իրենք Վիեննայի կոնվենցիայով պաշտպանված են: Մենք պետք է շատ-շատ կարող ենք ուղարկել իրենց իրենց երկրներ, իրենց երկրները իրանց պատժեն»: Պարզ է, որ իրանց երկրները չեն պատժի: Դա պարզապես օրինակ: Դրանից հետո ես սկսեցի գրել, քանի որ Բիլ Քլինթոնը նշանակվեց, ներկայացուցիչը Հայիթիում ընտրեցին Բիլ Քլինթոնին: Այս տարի հունվարին ես նորից մասնակցում էի Նյու Յորքում ինչ որ սեսիայի: Խնդրեցի նորից, ասեցի. «Հայիթին մնում է դուրս: Այնտեղ բռնությունները կատարվում են, ու հիմա բռնությունները ոչ միայն զինվորների կողմից կանանց դեմ է, այլ տղամարդկանց և տղաների նկատմամբ»: Ուսումնասիրությունը գալիս է, դուք պետք է ուշադրություն դարձնեք: Ռեակցիան շատ թույլ էր: Դա այն չէր, որ ես սպասում էի, անկեղծ: Այդ պատճառով դա է, որ ես ասում եմ, որ մասնակցությունը կանանց, բերելը կանանց այնտեղ, խոսելը, որ կանայք այնտեղ խոսեն շատ-շատ կարևոր է: Ես համոզված էի, որ եթե Հայիթիի այդ կանանց որևէ մեկը բերեր ՄԱԿ ու նրանք լսեին ՄԱԿ-ում՝ ինչո՞վ են այդ կանայք անցել, համոզված եմ, որ ամեն ինչ կփոխվեր կամ կմասնակցեին իրանք այդ գործում:

Տնտեսական անվտանգությունը, հա՞. եթե կանայք տնտեսական անվտանգություն չունենան, աշխատանք չունենան, ապահովություն չունենան, իրանք չեն կարա պատասխանատու լինեն իրանց երեխաների, իրանց ընտանիքների և կրթության համար: Եվ նորից հասարակությունը կմնա ոնց որ ասած պրիմիտիվ մակարդակի վրա: Էլի նույն Հայիթին բերեմ օրինակ, ու մեզ մոտ էլ է այդ տեղի ունենում՝ երեխաները դպրոց չեն գնում, որովհետև չունեն փող ընտանիքները, երեխաները նորից չեն էլ գրանցվում: Երեխաներին ուղարկում են մի ընտանիքից մինչև, մի քաղաքից մյուս քաղաք, որպեսզի ընտանիքներում որպես ստրուկ այդ երեխաները աշխատեն: Եվ այդ պրոցեսը շարունակվում է արդեն գիտե՞ք ինչքան ժամանակ, ու այս անգամ, որ ասում էի, այդ ստրկությունը ինձ նույնիսկ մի շատ բարձրաստիճան մարդ ասեց. «Դա մեր տրադիցիան ա: Դու չես կարող մեր տրադիցիային. . . »: Պատկերացրեք ստրկությունը դառնում է տրադիցիա: Մարդիկ արդեն սկսում են բան անել իրենց. «Դե բայց այդ երեխաների աշխատանքը դա մեր տրադիցիան է»: Ո՞նց կարող է տրադիցիա լինի երեխաների շահագործումը: Դա շատ վտանգավոր էլեմենտներ է: Ձեր հարցը.

44:06 – Շնորհակալություն: Ես ճիշտն ասած որոշ ժամանակ առաջ հետևում էի, որ Մերձավոր Արևելքում զինվորականներին սպասարկելու համար աղջիկներ էին գնում:

- Սեքս ջիհադի մասին է խոսքը: Այ, ցավալի է, որ երբ որ միջազգային հանրությունը անդրադառնում է այդ դեպքերին, երբ որ կոպիտ ասած բանը բանից անցած է լինում, երբ որ արդեն ընտանիքի հայրն է իրա աղջկան ուղարկում զինվորականների մոտ ու հետո հետ վերադարձնում: Այ ի՞նչ հնարավոր միջոցներ կային կանխարգելելու կամ ասենք հիմա, ասենք ինչ է հնարավոր, երբ որ դա արդեն մշակութային տարր է դարձել մարդկանց մոտ: Ի՞նչ հնարավորություններ կան դա կանխարգելելու, ինչ-որ այլ պատժիչ կամ մեղմ ինչ միջոցներով կանխարգելելու համար:

44:55 – Շատ լավ: Շնորհակալություն: Կա տեռորիզմի կոնվենցիան: Դուք շատ լավ գիտեք, որ տեռորիզմն էլ է հիմնվում նույն հիմքերի վրա՝ օգտագործելով մարդկանց խոցելիությունը: Այստեղ ծնողները ինչ որ բարձր իդեայի տակ մտածում են, որ դա երկար խոսակցություն է, բայց ես կարճ կկարողանամ պատասխանել ձեր հարցին: Կան ինչ-որ տրադիցիաներ մուսուլմանական աշխարհում, այն տեսակի տրադիցիաներ, որ եթե հերը կատարել է ինչ-որ մի մեղք՝ ընտանիքի երեխան, հատկապես աղջիկը, որպեսզի այդ մեղքը հատուցի, հանի հորից այդ մեղքը, պետք է գնա թշնամու տուն: Այսինքն, իրանք այդ բանով տալիս էին իրանց երեխաներին, որ իրենց վրայից այդ բանը հանեն: Դա հարցի մի կողմն էր: Երկրորդ հարցը՝ էլի նորից խոցելիությունը: Եղբայրը այնտեղ էր, ինքը մտածում էր՝ քույրը. «Գնամ, իմ եղբորս օգնեմ», որովհետև ռոմանտիկ ինչ-որ սենց, ոնց որ ասում է пелена է փակված: Իրանք պատկերացնում են դա ռոմանտիզմ, իրանք չեն պատկերացնում, որ դա, այդտեղ ի՛նչ դաժանություններ է տեղի ունենալու, ի՛նչ տիպի սարսափելի պատմություններ է լինելու: Իսկ երեկ չէ առաջին օրը, այսօր առավոտ եմ եկել Մալթայից, որտեղ գնացել էի Սիցիլիա, Մալթա՝ այդ կղզիները, որտեղ Սիրիայից ու Լիբիայից մարդիկ փախնում էին նավերով, փոքր լոդկաներով և գալիս էին: Հենց դա էի ուսումնասիրում, այդ ճամբարներում, որտեղ են իրանք գտնվում: Պատմությունները, որ դուք լսեք, պարզապես անհնար է: Տաս հազար մարդ այս քանի տարվա մեջ մահացել է այդ լոդկաներում: Ու երբ որ նրանք, կրիմինալները շատ լավ գիտեն, այն ջրերում, որոնք նեյտրալ են, որոնք պետությանը, ոչ մի պետության ջրերը չեն, այնտեղ են սպանությունները տեղի ունենում միշտ, այնտեղ են այդ բռնաբարությունները, այդ պրոցեսները տեղի ունենում, որովհետև բան չկա, պատասխանատվություն չկա: Կա միջազգային կոնվենցիաներ, ես ասեմ ձեզ, տեռորիզմ է: Ես հուսով եմ, որ այդ տեռորիզմի կոնվենցիան վերջապես կարողանա, որովհետև նա չունի իր մոնիթորինգային մեխանիզմը, պարզապես բան է՝ փաստաթուղթ է դեռ: Հուսով եմ, որ կկարողանան այդ տիպի բաներին անդրադառնալ: Դա կրթության հետ է կապված, պրեսսայի շատ մեծ դերի հետ է կապված, բացահայտելու այդ դեպքերի հետ է կապված՝ ոչ քաղաքական, որովհետև քաղաքականացնում են այդ երևույթներն էլ՝ այդ ռուս աղջկան, որ այնտեղ գնացել են, բան: Այդ երևույթները քաղաքականացնում է: Ավելի շուտ՝ օբյեկտիվ ներկայացում է այդ երևույթները: Պատմությունները սարսափելի են, և իրոք գիտելիքները շատ կարևոր են այնտեղ, որ մարդիկ իմանան՝ ինչ է կատարվում: Այստեղ ես խոսեցի ձեզ հետ գենդերային դետերմինացիայի մասին, պարզապես բերել եմ, որ դուք ինչ-որ ձևով իմանաք: Ես համարում եմ, որ շատ կարևոր, հատկապես մեր երկրների պարագայում շատ կարևոր բան է՝ դեֆինիցիա է, դա շատ կարևոր փիլիսոփայություն է գենդերային փիլիսոփայությունը: Ինչքան էլ ուզում են ասեն, ռուսական ոնց որ ասում է պրեսսան, որ գենդերային բանը ուրիշ, պարունակում է ուրիշ էլեմենտներ՝ դա հավասարության մասին, դա կոմպլեմենտարության մասին է: Դա կարևոր դերերի մասին է՝ տղամարդկանց և կանանց հավասար

հասարակության մեջ: Հիմա. այս փաստաթղթերն է, որի մասին ես սկզբից ասեցի, որոնք կան, կանանց դերի մասին խոսում են ՄԱԿ-ում, որոնք առաջ էին եկել և տասերեք-քսանհինգ ռեզոլյուցիան, որը երկու հազար թվին ուրեմն անվտանգության խորհուրդը հաստատել էր, այդ ռեզոլյուցիան իրոք պատմական փաստաթուղթ էր, որը խոսում էր դրա մասին, որ ի՞նչ դեր ունեն կանայք, ո՞ր դերերում պետք է կանանց դերը հաշվի առնվի կոնֆլիկտների ժամանակ: Մինչև այդ եղել են բավականին շատ գործիքներ: Առաջ գնալով ես կասեմ ձեզ, որ այդ ռեզոլյուցիան՝ էս վերջերս նշեցին տասնհինգամյակը այդ ռեզոլյուցիայի և անալիզ արեցին՝ ինչ է կատարվում երկրում, երկրներում: Ինչի՞ այդ ռեզոլյուցիան, լինելով անվտանգության խորհրդի ռեզոլյուցիան, որը պարտադիր է երկրների համար՝ որ բոլոր երկրները ընդունեցին և ի գիտություն դարձրեցին և գործիքներ ստեղծեցին: Ի՞նչն է պատճառը: Դրա մասին ես ձեզ առանձին կխոսեմ: Իսկ կոնվենցիաները, ռեզոլյուցիաները կարծում եմ բոլորդ գիտեք, կոնվենցիան՝ կանանց դեմ խտրականության վերացման կոնվենցիան, որը Հայաստանը չորս տարին մեկ զեկույց է ներկայացնում: Մեխանիզմը գիտեք՝ ո՞նց է ներկայացնում կոնվենցիան: Կարճ անդրադառնամ:

- Պարտադիր չեն, չէ՞ :

49:43 – Գիտե՞ք ոնց, բավականին հետաքրքիր բան է: Լավ հարց եք տալիս: ՄԱԿ-ի ռեզոլյուցիաները պարտադիր չեն: Բանի՝ Անվտանգության խորհուրդի ռեզոլյուցիաները պարտադիր են, ՄԱԿ-ի կոնվենցիաները պարտադիր չեն, բայց, բայց այնտեղ կա քաղաքական մեխանիզմ: Նախ առաջինը այդ կոնվենցիան ունի մոնիթորինգային ուրեմն այսպիսի մարմին, հա՞, որոնք բաղկացած է փորձագետներից տարբեր երկրների: Ամեն երկիրը պարտավոր է չորս տարին մեկ ներկայացնել զեկույց: Հետո, զեկույցը որ ներկայացնում է, զեկույցը ներկայացնում է պետությունը, զեկույցը ներկայացնում է հասարակական սեկտորը՝ ստվերային զեկույցը: Զեկույցը մի շարք փաստաթղթերի հետ միասին փորձագետները քննարկում են, լսում են պետություններին, հետո իրանք պատրաստում են ռեկոմենդացիաները: Ռեկոմենդացիաները պարտադիր չեն, բայց դրանք շատ հետաքրքիր քաղաքական դեր ունեն: Եթե առաջ այդ ռեկոմենդացիաները մնում էր թղթի վրա ու երկիրը երկրին ուղարկում էր այդ ռեկոմենդացիան, հիմա դա վեբկայքի վրա է: Բոլորը պարզ տեսնում են՝ ինչ է կատարել այդ երկիրը ցանկացած, ինչը չի կատարել: Այդ երկիրը, այդ կատարումը, չկատարումը ունենում է քաղաքական դեր: Ընտրվելուց տարբեր հանձնաժողովներով երկրի համար, ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհուրդը: Դա ունի իրա ոնց որ ասում է подпольный մեխանիզմը՝ երևացող չի, պարտադիր չի, բայց ունի այդպիսի դեր, որ դու չես կարող չկատարես: Դու ուզես-չուզես այդ մեխանիզմը պետք է անպայման կատարես: Նույն ձևով այստեղ կա մի հատ մեխանիզմ, որը ես այստեղ չեմ գրել: Դա այն մեխանիզմն է, որը ես էի ներկայացնում, որ ընտրովի մարմիններ են, հատուկ զեկուցողներ են, հիմա դարձել են քառասունմեկ հատուկ զեկուցողներ՝ տարբեր թեմաների, տարբեր պետությունների: Մենք ունենք Սուդանի, Իրանի, Մարոկկոյի հատուկ զեկուցողներ, որոնք այդ երկրով են հետաքրքրվում, կենտրոնանում, մարդու իրավունքների խախտումների դիրքում Բելոռուսն էր: Նաև ունենք թեմատիկ՝ կանանց հարցերով ունենք, երեխաների հարցերով ունենք հատուկ զեկուցող, ունենք կանանց բռնության դեմ, ստրկության, թրաֆիկի, օրենքի հասանելիությունը, առողջապահության հասանելիությունը: Եվ ինչպե՞ս է այդ մանդատը աշխատում: Նորից քաղաքական դեր ունի շատ: Այդ մանդատը աշխատում է որպես օմբուդսմենի մեխանիզմ: Մարդիկ կարող են ամբողջ աշխարհից քեզ հարցեր

ուղարկել՝ նամակներ, իրենց իրավունքների խախտման մասին: Եվ ՄԱԿ-ը, դու պետք է դնես, այդ ուղարկես պետությանը, որը խախտել է իրավունքը այն մարդու: Այդ մարդը կարող է լինի այդ նամակը անոնիմ, կարող ես ուղարկել անունով, եթե մարդը ուզում է և պետությանը տալիս է ժամանակ, որպեսզի այդ խնդիրը լուծի: Դու պատրաստում ես, դու գնում ես երկիր և անում ես անալիզ և պատրաստում ես երկրի մասին կարծիք և ռեկոմենդացիաներ ես գրում: Նորից ռեկոմենդացիաներդ կարող է չլինեն բան՝ պարտադիր, բայց շատ դեպքերում պարտադիր ինձ մոտ: Հիմնականում բոլոր երկրները, որտեղ ես գնացել եմ՝ ընդունվել են որպես օրենք ռեկոմենդացիաները: Նաև դու տարեկան ներկայացնում ես Գլխավոր ասամբլեային և ուրեմն մարդու իրավունքների խորհրդին թեմատիկ զեկույցներ: Բավականին շատ աշխատանք է: Մեխանիզմները ՄԱԿ-ում շատ կան՝ контролний մեխանիզմները, որ պետությանը կոնտրոլի տակ պահեն, որպեսզի պետությունը կարողանա, պետությունը վերահսկի կատարումը:

53:12 – Բայց մուսուլմանական երկրների դեմ դրանք չեն ազդում:

53:15 – Ազդում են, շատ լավ ազդում են:

53:17 – Դե՛, ինչքա՞ն պիտի ազդեն, եթե իրանք ընդունել են Մարդու իրավունքների իսլամական հռչակագիրը:

- Գիտե՞ք:
- Որը հակասում է ՄԱԿ-ի մարդու իրավունքների ընդհանուր հռչակագրին և հետևաբար այստեղ միջազգային իրավունքը ներպետականի վրա այդքան մեծ ազդեցություն չունի:

53:29 – Շատ, մի մենակ շեշտի իսլամականը: Պոռստը մեր ժամանակը շատ քիչ է: Շատ երկրներ կա, օրինակ՝ Մադագասկարը, որտեղ ես օֆիցիալ միսիայով էի: Երկիրը ունի իրա միջազգային օրենսդրությունը, երկիրը ունի: Ի դեպ Երևանի եղբայրացած քաղաքն է Անտանանարիվուն: Մի մտածի, որ Մադագասկարը շատ հետամնաց է: Իննսուն թվին մենք պայմանագիր ենք ստորագրել: Բայց ուզում եմ ասեմ՝ նա ունի իրա օրենսդրությունը, բայց օրենսդրությունը ծայրամասերում չի օգտագործվում: Օգտագործվում է, ոնց որ դուք ասում եք, ալտերնատիվ օրենսդրությունը և հիմա շատ ու շատ ավելի: Տարբեր երկրներում ալտերնատիվ օրենսդրությունն է ի հայտ գալիս ու դա շատ հետաքրքիր հիմա ֆենոմեն է, որ իրա բաները անդրադառնում են նրան: Որովհետև նա ասում է. «Գիտես ինչ, ես սովոր եմ շարժվել այս-այս օրենքներով: Այն, ինչ որ դու ես ինձ ասում, հատկապես մարդու իրավունքների օրենսդրությունը, ինձ համար օտար է: Ես պետք է իմ եղբորս վրա բողոքեմ, որ ինքը չի կատարում: Կամ իմ ընտանիքում հայրի վրա բողոքեմ, որը բռնաբարել է աղջկան: Չ՛է, էս իմ ընտանիքն է, ես չեմ ուզում»: Պատկերացրեք ինչքան կրթական պրոցես է պետք, ինչքան է պետք այդ մարդկանց կրթել և դրա հետ կից, բացի այդ օրենքներից, կան այն տրադիցիաները, որ իրենք կիրառում են, հասկանո՞ւմ եք: Դա բավականին մի սենց մե՛ծ ստվեր է: Իրավիճակը, երբ որ դու գնում ես մայրաքաղաք ու գնում ես ծայրամասային քաղաքները, մեր պրակտիկայով ես միշտ գնում էի ամենա-ծայրամասները, որովհետև ռեալությունը դու այնտեղ ես տեսնում: Քաղաքում ամեն ինչ մանիկյուռ արված է՝ մայրաքաղաքում, ամեն ինչ շատ սիրուն կտեսնես դու: Թղթի վրա շատ սիրուն է, բայց երբ որ դու գնում ես ծայրամասները, դու նոր տեսնում ես՝ ինչ է կատարվում, հասկանո՞ւմ եք: Դրա համար այնտեղ ուրիշ օրենք է աշխատում, այդ ռեալ օրենքները չեն աշխատում: Դա պետք է,

շատ կարևոր է դա հաշվի առնել, երբ որ դու ինչ որ քաղաքականություն ես մշակում կամ օրենսդրություն ես մշակում: Որովհետև իզոլյացիան այդ մարդկանց բերում է նրան, որ իրանք ոնց որ իրանք իրանցով են ապրում և այդ իրանց օրենքները ուժեղացնում են: Մեզ այդ օրենքները պետք չեն, մարդու իրավունքների օրենքը կամ մարդու իրավունքները դառնում է այսպես կլիշե:

Մի հատ մարդ էր եկել, գնացել էր, եկել էր ոտքով, որպեսզի հանդիպի ինձ, ասի, որ մարդու իրավունքներ է սովորել: Երբ որ ես ասացի. «Բովանդակությունը ինձ ասա մարդու իրավունքների»: Բովանդակությունը շատ խիստ տարբերվում էր նրանից, որ ես առհասարակ սպասում էի: Հետո ես գնացի իրա գյուղ: Իրոք ես չհասկացա՝ ո՞ր դար էր: Ցիվիլիզացիան այնտեղ բացարձակ չկար: Շատ…

56:07 – Սաուդյան Արաբիան էլ, հենց մահմեդական աշխարհն էլ ամենա- այդ հարուստներից է, բայց ինքը շատ խայտառակ վիճակում է նրանց իրավիճակը: Եվ իրենք անգամ այնտեղ ազգային օրենսդրության մեջ դատելու դրանց հետ կապված… Դատական օրենսգրքում կա, որ կնոջ ցուցմունքը դատարանում չի կարող երբեք համարժեք լինել, ինչպես տղամարդունը:

56:13 – Գիտեմ, այո:

- Ես կարծում եմ այդտեղ ՄԱԿ-ի ռեզոլյուցիաները չեն կարող, որովհետև…
- Հարևան Իրանը:

56:30 – Չէ, գիտեք, կամաց-կամաց կարողանում են: Կա էլի սենց մի բան, էլի նորից տեորիա կա, որ մենք տարբեր մակարդակ… բաների վրա ենք գտնվում ոնց որ, տարբեր զարգացման բաներ՝ պերիոդներ կա: Կա տենց տեորիա, որ, նույնը վերաբերվում է կոնֆլիկտներին, որ մարդիկ ուզում են հողեր գրավեն, փոխանակ իրենց հողում լավ ապրացնեն մարդկանց: Տարբեր ռեզոլյուցիաներ կան՝ հետամնաց երկրները, առաջադեմ երկրները: Գիտե՞ք, էլի նորից դիալոգը կարևոր է այնտեղ: Ես ունեցել եմ պրակտիկա, երբ որ Իրանում մի հատ անչափահաս երեխայի կախել էին, ես չկարողացա փրկեմ: Քանի հատ նամակ ուղարկեցի պետությանը, ոչ մեկը չէր լսում: Կան երկրներ, որտեղ դու պրոբլեմներ ունես, կան: Բայց էլի աշխատանքը չի նշանակում, որ դու պիտի ասես ու ռեզոլյուցիայի ենթարկես այդ երկիրը: Բավականին շատ աշխատանք է պետք տանել:

Էլի նորից օրինակ ձեզ բերեմ. նույն Մավրիտանիան, որը անընդհատ ես հիմա գնում եմ, որովհետև նախագահի խորհրդական եմ ընտրվել այդ երկրի: Երբ որ իրանք առաջին անգամ եկան մարդու իրավունքների խորհուրդ, իրանք ասում են. «Մեզ մոտ ստրկություն չկա»: Այնտեղ կլասիկ ստրկություն կա: «Դու մեր քույրն ես, մենք քեզ լսում ենք, բայց ստրկություն չկա ռեալ»: Ես իրա դեսպանին, իրանց դեսպանին, նախարարին անընդհատ բերում էի, այդ կանալի վրա նստացնում էի մյուսների հետ՝ նույն Բրազիլիայի, բանի, որը պայքարում են, և ստիպում էի առերես խոսել: Հինգ տարվա մեջ ես ունեցա հիմա օրենք, ունեցա ծրագիր, ունեցա բավականին շատ աշխատանք կատարված, որը պրեզիդենտը ստորագրեց, որ ստրկությունը կա: Այդ երկրները պահանջում են քաղաքական ազդեցություն, աշխատանք, մի քիչ ավելի լավ ուսումնասիրել: Ստիպված էի Ղուրանը ուսումնասիրել, որպեսզի կարողանամ իրենց օգնեմ: Ի՞նչ ձևով, որտե՞ղ ես կարող եմ ակցենտը դնել ռեկոմենդացիայի մեջ, որ ռեկոմենդացիաս օդի մեջ չմնա, որովհետև իրանք էին գոռում սկզբից. «Ա՜,

Հայաստանից եկած աղջիկը ի՞նչ կարա հասկանա մեր տրադիցիաները ոնց են»: Դու պետք է այդ ամեն ինչը կարողանաս անես, բայց չես կարա ասես. հա՛, Սաուդյան Արաբիան պրոբլեմ է, բոլորի համար պրոբլեմ է, նույն Բահրեյնը պրոբլեմ է: Բայց կամաց պիտի սկսվի այդ պրոցեսը: Դա պրոբլեմ է մեր սխալների, քաղաքական սխալների պրոբլեմն է:

Ինչի՞ց է բաղկացած կարևոր էլեմենտները՝ տասերեք-քսանհինգ ռեզոլյուցիայում, հա՞: Առաջինը. մենք խոսում ենք նրա մասին, որ կանայք պետք է մասնակցեն ՝մասնակցական պետք է լինի, պաշտպանությունը կանանց, գենդերային թրեյնինգներ պետք է լինի, գենդերային պրեսպեկտիվաները պետք է լինեն զորքերում, որ ես ասեցի, և կանխարգելումը: Ես մի փոքր անդրադարձա նրան, որ բռնությունը կանանց նկատմամբ դարձել է որպես գործիք, որպես զենք՝ քաղաքական զենք: Եվ այդ պատճառով, և երբեմն, ինչի՞ ես խոսեցի դրա մասին, որ զորքերը, խաղաղարար զորքերը, որոնք գալիս են այդ երկիր, որպեսզի պաշտպանեն, նրանք դառնում են նույն այն մարմինը, որը բռնաբարություններով է զբաղվում: Շատ պրոբլեմատիկ է: Այդ պատճառով դա շատ մեծ քննարկումների հարց էր և դա սկսվեց մի տասնհինգ տարի առաջ, երբ որ Կոսովոյում, Դեյթոնի պայմանագիրը երբ որ ստորագրվեց, Կոսովոն այն ժամանակ թրաֆիկինգի տեսակետից՝ մարդկանց վաճառքի տեսակետից, Կոսովոն միշտ երկիր էր, որը տրանզիտային էր: Մարդիկ Կոսովոյով գնում էին Եվրոպա, տանում էին աղջիկներին Եվրոպա: Երբ որ Դեյթոնի պայմանագիրը ստորագրվեց և խաղաղարար զորքերը եկան, այնտեղ կանգնեցին, նրանք ստեղծեցին շուկա ու ոչ միայն շուկա աղջիկների, այլ նաև իրենք սկսեցին զբաղվել, իրենք սկսեցին կազմակերպիչներ լինել թրաֆիկինգի և կանանց բռնության:

00:59 – Խաղաղապահ զորքերը:

1:00:00 –Խաղաղապահ զորքերը: Եվ ի՞նչ եղավ: ՆԱՏՕ-ն սկսեց վերանայել իր քաղաքականությունը՝ ՆԱՏՕ-ն ու KFOR-ը, հյուրանոցը ստեղծեցին, խաղաղության, code of conduct, պահելաձևի կոդեքսներ, ստեղծեցին փաստաթղթեր պատժամիջոցներ կիրառելու, դասընթացներ, ամբողջ training of police: Այս ամեն ինչը կատարվում է հիմա ՆԱՏՕ-ում, որպեսզի այդ պատժամիջոցները կիրառվում են խաղաղարար զորքերում, որպեսզի դա տեղի չունենա: Չէի ասի մի քիչ հիասթափված եմ, որ շատ էֆեկտիվ է: Այս վերջերս նորից խաղաղարար զորքերը Կոտ դ'Իվուարում զբաղվում էին երեխաների բռնաբարությամբ, երբ որ երեխաները ջուր էին ուզում, շոգ երկիր է, ֆրանսիական զորքերը: Թերթերում տեսած կլինեք: Էլի երեք զինվոր բռնաբարել էին երեխաներին: Այդ պրոցեսը կա, բայց այդ պրոցեսը էլի շատ կարևոր է անընդհատ ի հայտ անել, բացահայտել և դրա նկատմամբ պատժամիջոցներ կիրառել: Առաջին պունկտերից մեկը այս ռեզոլյուցիայի, առաջին կանխարգելումը, մենք, ինչպես մենք ասեցինք նույն տեռորիզմի համար, գիտելիքների կարևորությունը, քաղաքացիական մակարդակի վրա, ուրեմն, հասարակության մակարդակի վրա, հանդիպումների, փորձելով հասկանալ իրար, փորձելով խնդիրներ լուծել: Շատ կարևոր, ես կարծում եմ դուք լսել եք այդ սիստեմաները՝ արագ արձագանքման սիստեմաները և արագ արձագանքման մեխանիզմները: Երբ որ էլի նորից դա գալիս է հասարակությունից, երբ որ զգում ենք, որ հնարավոր է, որ այս իրավիճակը, հատկապես երբ որ մենք խոսում ենք ներքին կոնֆլիկտների մասին, հնարավոր է, որ այդ իրավիճակը վերադառնա կոնֆլիկտ: Այ, արագ արձագանքման մեխանիզմը շատ կարևոր մեխանիիզմ է, երբ որ բերում է կանանց, հասարակության մեջ մարդկանց, որոնք ունեն ուրեմն, ճանաչված

են, բերում է բանակցության սեղանին, բերում է քննարկությունների, խնդիրը բարձրացվում է և փորձում են այդ խնդիրը լուծել այ այդ մակարդակի վրա: Ինչպես կարելի է նորից բաները, և երբ որ զգում են, որ արդեն կա ուրեմն պրոբլեմներ մի մակարդակի վրա՝ հասարակության մակարդակի վրա, տարբեր խմբերի մակարդակի վրա, կանանց մասնակցությունը այդտեղ: Խոսելով, բերելով պրոբլեմները, ներկայացնելով պրոբլեմները շատ կարևոր է: Իռլանդիայի փորձը, երբ որ կանայք բավականին մեծ խնդիր, մեծ գործ կատարեցին, երբ որ ուրեմն բանակցությունների ժամանակ բերում էին այն խնդիրները, որի առաջ կանայք կանգնած են: Կազմակերպեցին խմբեր, հասան նրան, որ կանայք դարձան բանակցությունների մասնակցող: Ի՞նչ է նաև պահանջում, ես ասացի, գիտելիքների ուժեղացումը: Ներկայացնելը կանանց ուրեմն որոշում կայացնելու: Փորձել ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որ աջակցեն կանանց, որպեսզի կանայք մասնակցեն որոշում կայացնելուն: Օրինակ՝ Ղարաբաղը հիմա շատ լավ կլլիներ, որ կարողանար ինչ-որ բանակցությունների ժամանակ թեկուզ որպես դիտորդ ուղարկեր կանանց Ղարաբաղից, թեկուզ որպես դիտորդ: Ուրեմն ավելի կարևոր վերաբերմունք կանանց նկատմամբ, կանանց խմբերի, ինչ որ ես սկզբից ասում էի, լսելը կանանց, խոսելը, լսել նրանց պրոբլեմները, լսել բարձրացված խնդիրները, այն, ինչ որ կանայք ուղարկում են ուրեմն դեպի բանակցողներին այդ նյութերը կարդալ, որը երբեք չի կատարվում: Ինչո՞վ, ես ասեցի սկզբից, որ ռեզոլյուցիան շատ բան է, շատ լավ մեխանիզմ է, բայց չկատարվեց լիովին: Միայն հիսունչորս երկիր ունեցան իրենց ազգային ծրագիրները, կատարումներ կատարեցին, ինչը խնդիրներ լուծեց: Ինչո՞ւմն է բանը: Չկան մեխանիզմներ, մոնիթորինգային սիստեմա չկա: Հա, ռեզոլյուցիան կա, բայց պետությունները պետք է, ոնց որ ասած, պետք է միջոցներ կիրառեն, որպեսզի այդ ռեզոլյուցիան կատարվի: Չէր արվել այդ ամեն ինչը: Ուրեմն հիմա երկրորդ փաստաթուղթը, երբ որ սկսվեց՝ երկրորդ ռեզոլյուցիան, երկրորդ ռեզոլյուցիան այդ բոլոր բացերը ուսումնասիրել է և նաև ուսումնասիրվեց այն փաստը, որ պետությունները շատ դեպքերում մտածում են, որ մենք գումար չունենք այդքան, որպեսզի կարողանանք ի կատար դարձնենք այդ ռեզոլյուցիայի պահանջները: Եվ ստեղծվեց հատուկ հիմնադրամ, որը կօգնի պետություններին ուրեմն այդ ծրագիրները կատարել: Նորից տասնյոթ տոկոս բարձրացավ կանանց դերը ուրեմն պաշտոններում տարբեր, աշխարհում: Պարզ է՝ Հայաստանում դա չի: Վրաստանը օրինակ ունի այդ, բավականին լավ փորձ, մի քանի նախարար, կարևորը, որ նախարարները կանայք են և ծրագիր է մշակել՝ ազգային ծրագիր: Հիմա երկրորդ ազգային ծրագիրն է մշակում: Այստեղ մի, էլի շատ կարևոր մի մեխանիզմ է բերվում՝ կոորդինացիան տարբեր ինստիտուտների մեջ, որ չկա: Դա իրոք ցավոտ կողմն է ՄԱԿ-ի և դա ցավոտ կողմն է տարբեր ուրեմն ինստիտուտների: Ի՞նչ ունենք հիմա: Այստեղից պրծանք: Ունենք այս պահին բավականին լավ ուսումնասիրություն, որ ՄԱԿ-ը կատարել է այն սխալների վրա, այն պրոցեսների վրա, որոնք հիմա կան: Ուսումնասիրությունը խոսում է նրա մասին, որ փոխվող կոնֆլիկտների նկատմամբ մենք պետք է այլ ձևով արձագանքենք և միջազգային հասարակությունը պետք է այլ ձևով ուրեմն բան անի՝ արձագանքի: Խոսվում է նրա մասին, որ իրոք ներդրումներ է պետք, որպեսզի կանայք գան այդ պաշտոնների, որպեսզի կանանց բերեն: Բավականին շատ կրթական ծրագիրներ է պետք: Պետք է ուժեղացնել կոնտակտները երկրների միջև և փորձի մաքսիմալ խնդիրները բարձրացնել: Բարձրացնել այդ խնդիրները, որը ուրեմն պետք է լսելի դարձնեն բանակցողների մոտ, շատ դաշտային ուսումնասիրություններ կատարել: Շատ քիչ կա ուսումնասիրություններ, որոնք քաղաքականացված չեն: Մեկ՝ Ղարաբաղի կոնֆլիկտի հետ կապված: Շատ քիչ կան ուսումնասիրություններ, որոնք ռեալ դաշտից են գալիս, որոնք

կարող են որպես հիմք լինել այդ բանակցողների համար, եթե նրանք դա օգտագործեն: Այդքանը: Ես կուզենայի վերջացնել: Այսօր դուք խոսում էիք նրա մասին, որ Ումբերտո Էկոն այսօր մահացել է: Ինքը մի հատ շատ լավ, հետաքրքիր ֆրազ ունի: Ինքը ասում է. «Շատ դժվար է կոնֆլիկտները կանխարգելել, կանգնացնել աշխարհում: Ընդհանուր, որովհետև դա մարդու բնության մեջ է»: Բայց իրա լոկալ մակարդակի վրա դա հնարավոր է, եթե մարդիկ ունենան իրոք կամք, ունենան ուժ ու կարողանան հաղթահարել դա: Եվ նույնիսկ ինքն է նշում, որ կանանց դերը այնտեղ շատ կարևոր է: Շնորհակալություն:

Այս տեսանյութը հնարավոր է դարձել Երևանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան շնորհիվ: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն Մեծ Բրիտանիայի դեսպանատան կամ ԵՀՀ տեսակետներին: